



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Վ. Մ. ԳԱՐՁԻՆ

ԱՋԻԱՆՇԱՆ

ԹԱՐԳՄ. ՌՍԵՐԷՆԻՑ

ԳԻՆՆ Է՝ 2 ԿՈՊ.

Բ Ա Գ Ո Ւ
ՏԳԱՐԱՆ ԵՂԲ. ՂԱԶԱՐԵԱՆՆԵՐԻ

1902.

3 NOV 2010
27 JUL 2006

Վ. Մ. ԳԱՐՉԻՆ

ԱԶԳԱՆՇԱՆ

ԹԱՐԳՄ. ՌՍԵՐԷՆԻՑ

Բ Ա Գ Ո Ւ

ՏԳԱՐԱՆ ԵՂԹ. ՂԱԶԱՐԵԱՆՆԵՐԻ

1902.

14 . 03 . 2013

10342

Дозволено Цензурою.
10 Июня 1902 г., г. Тифлисъ.



2369-89

Սիմէօն Իվանովը պահանջ էր երկաթուղու
գծի վրայ: Նրա տնակի երկու կողմի կայարաններից
մէկը տասներկու վերստ, միւսը 10 վերստ հեռա-
ւորութեան վրայ էր գտնուում: Տնակից չորս վերստ
հեռու մի մեծ մանարան էին բաց արել անցեալ
տարի, անտառի չեռեից երևում էր նրա սեւացած
ծխնելոյզը: Իսկ մօտերքումը՝ բացի հարեան տնակ-
ներից, ոչ մի բնակութիւն չը կար: Սիմէօն Իվանովը
հիւանդոտ մարդ էր. ինը տարի առաջ նա եղել էր
պատերազմումը. մի սպայի մօտ սպասուոր էր և
ամբողջ կուռի ժամանակ նրա հետն էր... Քաղցի և
ցրտի էր ենթակայ լինում, արևի տակը տապակ-
ւում, շոգերին և սառնամանիքին 40 — 50 վերստ
ճանապարհ էր գնում, պատահում էր և գնդակ-
ների տարափին էր ենթարկուում, բայց փառք Աս-
տուծոյ, գնդակներից ոչ մէկը նրան չը դիպաւ: Մի
անգամ նրա զօրագունդը պատերազմողների առա-
ջին գծի վրայ էր գտնուում: Մի ամբողջ շաբաթ
այդ զօրագունդը գնդակներ էր փոխանակում թիւր-
քերի հետ: Գծի երկարութեամբ երեսն ի վայր պառ-
կած՝ միւս կողմը սպաստանած թշնամիների հետ
առաւօտեանից մինչև երեկոյ հրացանաձգութեան
մէջ էր մեր զօրագունդը: Սիմէօնի մեծաւորն էլ
այդ շղթայումն էր: Սիմէօնը ամեն օր երեք անգամ
զօրագնդի խոհանոցից՝ որը գտնուում էր ձորի մէջ,
իւր սպայի համար ինքնաեռ և կերակուր էր տա-
նում: Նա գնում էր արձակ դաշտի միջով ինքնա-
եռը ձեռքին. գնդակները վզգում են, քարին դիպ-
չում, շրջվում: Սարսափում է Սիմէօնը, լալիս,
բայց էլի գնում: Սպաները շատ բաւական էին Սի-

մէօնից, որովհետև միշտ տաք կերակուր և թէյ էին ստանում: Կուռի դաշտից ողջ վերադարձաւ Սիմէօնը: Բայց ձեռքերն ու ոտքերը յօդացաւով բռնուել էին: Այն օրուանից նա քիչ վիշտ չէր կրել: Վերադարձաւ տուն և իր ծերունի հայրը վախճանուեց, իր փոքրիկ՝ չորս տարին անցած տղան էլ բկացաւից մեռաւ: Սիմէօնը մնաց մէնակ իւր կնոջ հետ: Հոգաբորժութեամբ զբաղուելն էլ նրան չաջողուեց: ուսած ձեռք ու ոտքով ինչպէս կարող էր նա հողը հերկել: Իր գիւղում ապրելը նրան անտանելի դարձաւ, գնաց ուրիշ տեղեր բախտ որոնելու: Նա իր կնոջ հետ շատ տեղ ման եկաւ, բայց ոչ մի տեղ բախտ չունեցաւ: Կինը մի տեղ աղախին մտաւ, իսկ ինքը դեռ շարունակում էր թափառել: Մի անգամ էլ այնպէս պատահեց, որ նա երկաթուղով էր ճանապարհորդում. կայարաններից մէկում այգտեղի մեծաւորը ծանօթ թուեց իրեն: Սիմէօնը զիտում է մեծաւորին և սա էլ ուղիղ Սիմէօնի երեսին է նայում: Իրար ճանաչեցին. դուրս եկաւ որ մեծաւորը իր նախկին սպան էր:

- Դու Իվանովն ես, ասում է:
- ձիշտ այդպէս, ձերդ ազնւութիւն, ես ինքս եմ:
- Ինչպէս ես ընկել այստեղ:
- Սիմէօնը պատմեց իր գլխին եկածը.
- Իսկ հիմա ո՞ւր ես գնում, հարցնում է սպան:
- Իսկի չը գիտեմ, ձերդ ազնւութիւն:
- So, լիմար, ինչպէս թէ չը գիտես:
- Այո, ձերդ ազնւութիւն. գործ չունեմ, իսկ ո՞ր և է ծառայութիւն պէտք է գտնել:
- Նայեց նրա վրայ մեծաւորը, մտածեց ու ասաց.
- Ահա ինչ, եղբայր, եկ դու այստեղ՝ կաշարանումը կաց առայժմ: Դու կարծեմ ամուսնացած ես.

ո՞ւր է կինդ:

— ձիշտ այդպէս, ձերդ ազնւութիւն, ամուսնացած եմ. կինս ծառայում է Կուրսկ քաղաքում մի վաճառականի մօտ:

— Ուրեմն նրան գրիր որ գալ. ես ձրի տոմսակ ձեռք կրբերեմ նրա համար: Երկաթուղու գծի վրայ շուտով տեղ կը բացուի. ես կը հոգամ այդ մասին և կը խնդրեմ գծի կառավարչին այդ պաշտօնը քեզ տայ:

— Շատ շնորհակալ եմ, ձերդ ազնւութիւն, ասաց Սիմէօնը և մնաց կայարանը:

Այնտեղ նա մեծաւորի խոհանոցի գործերին էր օգնում, փայտ էր կտրում, բակն ու տախտակամածը աւելում: Երկու շաբթից յետոյ կինն էլ եկաւ ու Սիմէօնը մի սալլակի վրայ բարձած իր իրեղէնները, տեղափոխուեց նոր բնակարանը: Պահնորդի տնակը նոր էր և տաք. փայտ էլ որքան ուզես. պահնորդներից մի փոքրիկ բանջարանոց էր ժառանգել և գծի երկու կողմն կէս դեսեատինի չափ վարելահող ևս իր տրամադրութեան տակն էր: Ուրախացաւ Սիմէօնը. մտածում էր, թէ ինչպէս լաւ տուն ու տեղ կը սարքէ, կով, ձի կը գնէ:

Նրան տունին բոլոր հարկաւոր պիտուքները — կանաչ դրօշակ, կարմիր դրօշակ, լապտերներ, եղջերափող, մուրճ, պտուտակների համար բանայի, երկաթէ նիզ, բահ, աւել, լիսեռներ, մեխեր, երկու կանոնագրքեր, նոյնպէս և գնացքների ժամանակացոյցը: Սկզբում Սիմէօնը գիշերները համարեա չէր քնում և գնացքների ցուցակն էր անգիր անում: Գնացքի անցնելուց դեռ երկու ժամ առաջ դուրս էր գալիս, իր պահպանութեան յանձնուած ճանապարհը աչքէ էր անց կացնում, նստում տնակի

առջևի նստարանի վրայ ու շարունակ սպասում ու ախանջ էր դնում ընթերի դողալուն և գնացքի աղմուկին: Կանոններն էլ լաւ անգիր արաւ. թէ պէտ վատ էր կարգում, հեգելով, բայց և այնպէս լաւ իւրացրեց:

Ամառն էր, գործերը հեշտ էին. ճանապարհի ձիւնը մաքրել հարկաւոր չէր: Այդ գծի վրայ գնացքներն էլ սակաւ էին: Գուրս էր գալիս Սիմէօնը օրը երկու անգամ շրջելու իւր մի վերստը, փորձում էր պնդացնել պտուտակների թուլացած մայրերը. ճանապարհի խիճն էր հարթում, աչքէ էր անցնում ջրի խողովակները և գալիս տուն իւր տնային գործերը կարգի բերելու: Բայց իր տնտեսութեան գործին մի խոչնդոտ կար. — մի բան անելու համար ամէն անգամ պէտք է իրաւունք խնդրէր գծի վարպետից, նա էլ պէտք է զեկուցանէր այդ մասի երկաթուղային գծերի գլխաւորին. իսկ մինչև պատասխան ստանալը, ժամանակը, տեսար, անցաւ: Սիմէօնը ու իր կինը նոյնիսկ ձանձրանում էին:

Այդպէս մի երկու ամիս անցաւ: Սիմէօնը սկսեց իր հարեան պահնորդների հետ ծանօթանալ: Մէկը մի հին ծերուկ էր. նա հազիւ էր կարողանում տնակից դուրս գալ, նրա փոխարէն կինն էր պահնորդութիւն անում: Շատերն էին աչք տնկել նորա տեղին: Միւս պահնորդը, օրը աւելի մօտ էր կայարանին, նիհար և ջղոտ երիտասարդ էր: Սիմէօնի հետ առաջին անգամ պատահեց գծի վրայ շրջելու ժամանակ: Սիմէօնը վերցրեց գլխարկը և բարևեց:

— Բարի աջողում, հարեան, սասց նա:
Հարեանը աչքի տակով նայեց. «բարև» սասց, ետ դարձաւ ու գնաց: Յետոյ նրանց կանայքը իրար

հանդիպեցին. Սիմէօնի կինը բարևեց հարեանուհուն, բայց վերջինս էլ երկար չը խօսեց և գնաց: Մի անգամ էլ Սիմէօնը տեսաւ հարեանի կնոջը և հարցրեց. «ինչո՞ւ ամուսինդ այդպէս սակաւախօս է»:

Կինը քիչ լռելուց լետոյ սասց.
— Բեզ հետ ինչի մասին պէտք է խօսէր. ամեն մէկը իր գործով է զբաղուած... գործիդ կաց»:

Մօտ մի ամիս էլ անցաւ: Պատահում էին հարեանները, նստում էին մի տեղ, չիբուխ ծխում և պատմում իրենց կեանքից: Վասիլին մեծ մասամբ լռում էր, իսկ Սիմէօնը պատմում էր թէ իր գեւղից և թէ արշաւանքից:

— Բիչ անբախտութիւն չեմ կրել կեանքումս, ասում էր Սիմէօնը, չը նայած որ շատ էլ ծեր չեմ: Բախտ չ'տուեց Աստուած. ինչ որ մարդուս վիճակուած է Աստուածանից, այնպէս էլ լինում է: Այո՛, եղբայր Վասիլի՛ Ստեպանը՛, այսպէս է:

Իսկ Վասիլի՛ Ստեպանը՛ը դատարկեց չիբուխը, վեր կացաւ տեղից ու սասց.

— Մեր վիճակը չէ մեր կեանքն ուտող-մաշողը, այլ մարդիկն են: Մարդուց աւելի գիշատիչ և չար գազան չը կայ աշխարհումս. գայլը գայլին չէ ուտում, իսկ մարդը մարդուն ողջ-ողջ կուլ է տալիս:

— Եդ մէկը մի ասիր, եղբայր, գայլը գայլին կուտի:

— Խօսքի վրայ եկաւ — սասցի, բայց էլի կը պընդեմ, որ մարդուց աւելի քարասիրտ արարած չը կայ: Եթէ մարդկանց չարութիւնն ու ազահուլութիւնը չը լինէր — կարելի կը լինէր ապրել: Ամեն մէկը լարմար ըսպէին է սպասում, որ ունեցածդ ձեռքիցդ կորզէ, բերնիդ պատառը լափշտակէ ու լափէ:

Սիմէօնը մտմտաց.

— Զը զիտեմ, եղբայր, գուցէ և այդպէս է. իսկ եթէ այդպէս էլ լինի, ուրեմն Աստուած է այդպէս սահմանել:

— Դէ, եթէ այդպէս է, ասաց Վասիլին, էլ կարեք չը կայ իրար հետ խօսելու. եթէ ամեն մի վատ գործ Աստուծոյ վրայ ձգենք, իսկ ինքներս ձեռներս ծալած նստենք ու տանենք, դա նշանակում է, եղբայր, անասուն լինել և ոչ թէ մարդ: Այս է իմ խօսքը:

Ասաց ու գնաց՝ առանց մնաս բարով ասելու: Սիմէօնն էլ վեր կացաւ.

— Հարեան, կանչեց, էլ ինչո՞ւ ես հայհոյում:
Բաց հարեանը լետ չը նայեց ու գնաց: Երկար նայում էր Սիմէօնը նրա լետեւից, մինչև որ Վասիլին ճառեց և անյայտացաւ: Սիմէօնը վերադարձաւ տուն և ասաց կնոջը.

— Օ՛հ Ս. Երինա, մեր հարեանը... տեղովը թոյն է: Սակայն հարեանները իրարից չը խոռվեցին. դարձեալ պատահեցին, առաջուայ պէս սկսեցին խօսակցել և էլի նոյն առարկայի մասին:

— Ե՛հ, եղբայր, եթէ մարդիկ չը լինէին, մենք այդպէս չէինք ապրել այս տնակներում, ասաց Վասիլին:

— Ինչ կայ որ. այս տնակներումը, ոչինչ, կարելի է ապրել:

— Կարելի է ապրել... ինչպէս չէ, կարելի է ապրել... շատ ես ապրել, քիչ ես շահուել. շատ ես նայել, քիչ ես տեսել: Ս. իր ինչ է մեզ պէս խեղճ մարդու կեանքը՝ լինի դա այսպիսի տնակում, կամ թէ մի որեւիցէ ուրիշ տեղ: Կլանում են քեզ մարդակերները, բոլոր հիւթդ ծծում են, իսկ երբ ծե-

րացար, ինչպէս անպէտք չանջ խոզերի առջև կը ձգեն: Ի՞նչ ինչքան ուճիկ ես ստանում:

— Շատ չեմ ստանում, Վասիլի Ստեպանը, 12 բուբլի:

— Իսկ ես 13 բ. 50 կ. թոյլ տուր հարցնել թէ ինչո՞ւ է այդպէս: Օրէնքով ամենքին միատեսակ է նշանակուած. ամսական 15 բուբլի, վառելիք և լուսաւորութիւն: Իսկ ո՞վ է մեզ 12 բ. կամ 13 բ. 50 կ. նշանակում. թող որ հարցնեմ քեզ... իսկ դու դեռ ասում ես, թէ կարելի է ապրել... հասկացիր, որ խօսքս ինչ որ մէկուկէս կամ երեք բուբլու մասին չէ, թէկուզ ամբողջ 15 բուբլին էլ վճարէին... Անցեալ ամսին գնացել էի կայարան. ես այնտեղ պատիւ ունեցայ տեսչին տեսնելու, որն այդ ժամանակ այդտեղով անցնում էր: Առանձին վագոնով էր ճանապարհորդում. կայարանը դուրս եկաւ, կանգնեց և դիտում էր... է՛հ, ես այստեղ երկար մնացողը չեմ. կերթամ, ուր աչքս կը բռնի:

— Ուր ես մտադիր գնալ, եղբայր. լաւագոյնը փնտռողը ունեցած լաւիցն էլ կը գրկուի: Այստեղ գոնէ տաք տուն ունես, հող էլ մի փոքր կայ, կինըդ աշխատաւոր է...:

— Հող... մի նայիր հողիս վրայ. ինչ կայ այնտեղ. դարնանը կաղամբ էի տնկել, մէկ էլ տեսայ գժի վարպետը եկաւ. ,,այս ինչ է, ասում է. ինչո՞ւ, ասում է, իմաց չես տուել այդ մասին, ինչո՞ւ իրաւունք չես խնդրել: Քանզիր խկոյն, այնպէս որ հետքն անգամ չը մնայ“: Հարբած էր, մի ուրիշ անգամ կարելի է բան չտեսր, բաց այդ ժամանակ խտասիրտ գտնուեց...:

„Երեք բուբլի տուգանք“:
Վասիլին լուեց, փոքր ծխեց և շարունակեց

կամաց ձայնով.

—Քիչ էլ էր խօսել, նրա մեծ կտորը ականջը կը թողնէի:

—Գու էլ ես շատ տաքարիւն, հոգիս:

—Տաքարիւն չեմ, այլ ճշմարիտն եմ ասում և խորհում. դեռ սպասիր, ես նրա հախիցը կը գամ. կառավարչին իրեն եմ գանգատուելու. կը տեսնենք: Եւ իսկապէս գանգատուեց:

Մի անգամ կառավարիչը եկել էր գիծը նայելու. երեք օրից լետոյ պետք է Պետերբուրգից պատուաւոր պարոններ գալին անցնէին—վերաքննութիւն էին կատարում և այդ պատճառով ամեն ինչ պետք էր կարգի բերել: Գծի երկու կողմը հող ածեցին, հարթեցին, փայտերը ուղղեցին, մեխերը պնդացրին, պտուտակների մայրերը ամրացրին, սիւները ներկեցին, ճանապարհների իրար կտրած տեղերը դեղին հող ածեցին: Հարևան պահանջի կինը իր ծերունուն անգամ ուղարկել էր ճանապարհի խոտերը քաղհան անելու: Սիմէօնը ամբողջ շաբաթ գործում էր, ամեն ինչ կարգի էր բերել, շորերն էլ մաքրեց, կարկատեց, պղնձէ գօտկապն էլ աղիւսի փոշիով սրբեց—փայլեցրեց: Վասիլին էլ էր աշխատում: Կառավարիչը եկաւ դրեզինայի^{*} վրայ: Չորս բանուորներ կոթն էին պտրտեցնում. ատամնաւոր անիւները ճռնչում էին. կառքը մի ժամում 20 վերստ էր սլանում. անիւները սուլում էին: Հասաւ Սիմէօնի տնակին: Սիմէօնը ներկայացաւ. ամեն ինչ կարգին էր:

—Գու վաղուց այստեղ ես, հարցրեց կառավարիչը:

—Մայիսի 2-ից ձերդ ազնուութիւն:

^{*}) Երկաթուղու գծի վրայ ատամնաւոր անիւների միջոցաւ առաջ շարժուող կառք:

—Լաւ, շնորհակալ եմ: Իսկ 164 համարում ո՞վ է: Գծի վարպետը՝ որը ուղեկցում էր նրան, պատասխանեց.

—Վասիլիյ Սպիրիդով:

—Սպիրիդով, Սպիրիդով...հա, այդ, այդ այն չ՞է, որին դուք անցեալ տարի նկատողութիւն էիք արել:

—Հենց նա է:

—Սպան, տեսնենք Վասիլիյ Սպիրիդովին, շարժեցէք:

Բանուորները սկսեցին առաջ շարժել կառքը: Նայեց Սիմէօնը նրանց լետեւից և մտածեց. երևի հարևանի հետ մի բան կը պատահի:

Մի երկու ժամից լետոյ Սիմէօնը գնաց գիծը նայելու: Տեսնում է որ մի մարդ է գալիս գծի վրայով, իսկ գլխի վրայ մի ինչոր սպիտակ բան է երևում: Նայեց Սիմէօնը և տեսաւ որ Վասիլին է, ձեռքին փաշտ է բռնած, շալակին մի փոքրիկ կապոց, իսկ երեսը թաշկինակով կապած է:

—Ո՛ւր ես գնում, հարևան, կանչեց Սիմէօնը:

Մօտեցաւ Վասիլին. կառքի պէս սպիտակ էր երեսը, աչքերը փայլում էին բարկութիւնից. սկսեց խօսել, բայց ձայնը դաւաճանում էր:

—Քաղաքը, առում է, Մօսկուա... վարչութեանն եմ դիմելու:

—Վարչութեանը... այ քեզ բան, ուրեմն գանգատուելու ես գնում: Թող, Վասիլիյ Ստեպանըչ, մոռացիր...

—Չէ, եղբայր, չեմ մոռանալ, էլ ուշ է մոռանալը: Տեսնում ես, նա այնպէս երեսիս խփեց, որ արիւն է հոսում: Քանի մեռած չեմ, չեմ մոռանալ, չեմ թողնիլ այսպէս:

Սիմէօնը բռնեց նրա ձեռքից.

— Թող, Ստեպանը, ճիշտն եմ ասում. գործը չես լաւացնի:

— Ի՞նչ աւելի լաւ... Ինքս էլ գիտեմ, որ աւելի լաւ չի լինի. դու ճիշտ էիր ասում մարդուս վիճակի մասին. ճիշմարիտ որ ինձ համար ոչինչ չեմ կարող անել, սակայն անհրաժեշտ է արդարութեան համար կռուել:

— Ախր ասա, խնդրեմ, թէ ինչինց սկսուեց գործը:

— Ինչինց... ցած իջաւ կառքինց, նայեց ամեն ինչ, տնակս էլ մտաւ: Ես գիտէի, որ խիստ է պահանջելու. ամեն ինչ լաւ կարգի էի բերել: Ուզում էր գնալ, երբ ես մօտեցայ գանգատով: Նա սկսեց գոռալ. «Այժմ գործերի քննութիւն է, ասում է, իսկ դու պարտէզի մասին ես գանգատում. այստեղ գաղտնի խորհրդականներ են գալիս, ասում է, իսկ դու կաղամբի մասին ես խօսում»: Ես չը համբերեցի և ասացի մի քանի խօսք. թէ և շատ էլ կծու չէր, բայց նա վերաւորուեց և այնպէս մի հարուած տուեց ինձ... իսկ ես մնացի կանգնած, կարծես թէ այդպէս էլ հարկաւոր էր. սթափուեցի, երեսու լուացի և հիմա գնում եմ:

— Իսկ տնակիդ հետ ի՞նչ ես անելու:

— Կինս մնացել է այնտեղ, նա կը հոգայ. էհ, շատ հարկաւորս է... Իրանք էլ իրանց ճանապարհն էլ: Վերկացաւ Վասիլին:

— Մնաս բարեաւ, Իվանը. չը գիտեմ, կը գտնեմ արդեօք արդարադատութիւն:

— Մի՞թէ ոտով ես գնալու:

— Ճանապարհին կը խնդրեմ ապրանքատար գնացքին վերցնել ինձ. էպուց Մոսկուա կը լինեմ: Հարեւանները իրար հրաժեշտ տուին: Գնաց Վասիլին և երկար ժամանակ չէր երևում: Կինը

նրա տեղ ամեն ինչ անում էր, գիշերները չէր քնում. բոլորովին հալումաշ եղաւ մարդուն սպասելով: Երրորդ օրը քննիչները անցան. շոգեշարժը, ապրանքների վագոնը, երկու I կարգի վագոնները, բայց Վասիլին չը կար ու չը կար: Զորրորդ օրը Սիմէօնը պատահեց Վասիլիի կնոջը. խեղճ կնկան աչքերը ուռել-կարմրել էին արտասուքից:

— Մարդդ վերադարձաւ, հարցրեց Սիմէօնը:

Ոչինչ չը պատասխանեց կինը, ձեռքը թափուեց ու գնաց:

Մանկութիւնից Սիմէօնը սովորել էր սուլակներ շինել. միջուկը այրում էր, ուր հարկաւոր էր ծակեր էր բաց անում, լեզուակն էր պատրաստում՝ իւր տեղը դնում և այնպէս էր յարմարցնում, որ ինչ ուզում ես, կարելի էր ածել: Ազատ ժամանակը նա ահագին քանակութեամբ սուլակներ էր շինում և կոնդուկտորի միջոցաւ ուղարկում էր քաղաքը ծախելու. այնտեղ հատը 2 կոպեկով առնում էին: Գծի քննութեան երրորդ օրը կնոջը թողեց տանը՝ ժամը 6-ին եկող գնացքը դիմաւորելու, իսկ ինքը վերցրեց դռնակը և գնաց անտառ՝ սուլակներ պատրաստելու համար փայտ կտրելու: Հասաւ իւր պահնորդութեան սահմանը—այստեղ ճանապարհը ծուռում էր—ցած իջաւ հողաբլրից և անտառի միջով գնաց զառ ի վայր: Կէս վերստ հեռաւորութեան վրայ կար մի մեծ ճահիճ, որի մօտը լաւ թուփեր էին բուսնում սուլակների համար: Ամբողջ մի խուրձ կտրեց և դարձաւ դէպի տուն: Գնում էր անտառի միջով. արեւը արդէն մայր մտնելու մօտ էր, տիրում էր մեռելային լուսութիւն, լուռում էր միայն ինչպէս ծտերը ծլվում են

և ինչպէս պտիկ խոտը ոտի տակ խշխշում է: Մի քիչ էլ անցաւ, արդէն մօտենում էր գծին, երբ նրան թուաց, թէ մի ինչ որ ուրիշ ձայն էլ է լսում, կարծես երկաթը երկաթին զարնելով զրնգում է: Միմէօնը արագացրեց քայլերը: Ոչ մի վերանորոգութիւն չը կար այդ ժամանակ այդ կողմերում: „Այս ինչ է նշանակում“, մտածում էր նա: Բարձրացաւ բլրի վրայ և նրա աչքին երևացին երկաթադճերը: Վերջ՝ գծի վրայ, պպգած է մէկը և ինչ որ բան է անում: Միմէօնը կամացուկ սկսեց մօտենալ, կարծում էր թէ եկել են պտուտակներ գողանալու: Նայեց և տեսաւ որ այն մարդն էլ վերկացաւ. ձեռքին մի նիզ ունէր. կոխեց այդ նիզը երկաթադճի տակը և ուժգին մի կողմը հրեց: Միմէօնի աչքերը մթնեցին, ուզում է գոռալ, չէ կարողանում: Տեսնում է որ Վասիլին է. շտապով մօտ է վազում, իսկ Վասիլին նիզն ու բանալին վերցրած՝ բլրի միւս կողմից սլանում-փախչում է:

— Վասիլի՛ Ստեպանը՛, հարագոտս, հոգեակս, վերադարձի՛ր, նիզը տուր, ոչ ոք չի իմանալ: Վերադարձի՛ր, հոգիդ փրկիր մեղքից:

Վասիլին ուշք չը դարձրեց և գնաց անտառ: Կանգնել է Միմէօնը կոարուած գծի մօտ. իր փայտերը վայր ձգեց: Գնացքն էլ ապրանքատար չէ, այլ մարդատար: Ոչ մի կերպ չէ կարելի կանգնեցնել-դրօշակը հետը չէ: Գիծը անհնարին է առանց գործիքների ուղղացնել... հարկաւոր է վազել, վազել անմիջապէս դէպի տնակը՝ գործիքների ետևից: Տէր Աստուած, դու օգնիր: Միմէօնը շքնջասպառ վազում է, բայց—հա՛ կընկնի: Հաղիւ անտառից դուրս եկաւ, մինչև տնակը միայն 100 սաժեն էր մնում, ոչ աւելի, լուռեց գործարանի սու-

լոցի ձայնը: Ժամը 6-ն է: Երկու բոպէից յետոյ գնացքը կանցնի. Տէր Աստուած դու փրկես անմեղ հոգիները: Միմէօնը պատկերացնում է, ինչպէս շոգեշարժը ձախ անուով դէմ կառնի տեղահան եղած ընկնի, կը ցնցուի, մի կողմի վրայ կը ծռուի, գծի գերանները կը ջարդի, փշուր փշուր կանի, իսկ այնտեղ գիծը կոր է, շրջան է կատարում և հողաբլուր է. շոգեկառքը 11 սաժեն ցած կնկնի, իսկ երրորդ կարգը մարդկանցով լիքն է, փոքր երեխայք... նստած են հիմա հանգիստ, ոչ մի բանի մասին չեն մտածում: Աստուած իմ, մի խելք սորվեցուր ինձ: Ո՛չ, տնակին հասնել ու ժամանակին վերադառնալ անհնար է...

Միմէօնը չը հասաւ տնակին. յետ դարձաւ և առաջուանից աւելի շտապ-շտապ վազեց: Վազում է գիտակցութիւնը կորցրած ինքն էլ չը գիտէ թէ ինչ է լինելու: Հասաւ փչացած գծին—անտառից կտրած փայտերը այնտեղ թափուած էին—կուացաւ և վերցրեց նրանցից մէկը, առանց իմանալու թէ ինչու և շարունակեց վազել: Նրան թըլում է, թէ գնացքը արդէն գալիս է, լսում է հեռուից հնչող սուլոցի ձայնը. լսում է ինչպէս գիծը հանդարտ և որոշ չափով շարժուած է: Այլ ևս ուժ չունի ճանապարհը շարունակելու: Կանգ առաւ սարսափելի տեղից 100 սաժեն հեռաւորութեան վրայ, այտեղ նրա գլխում յղացաւ մի լուսաւոր միտք: Վերցրեց գլխարկը, հանեց թաշկինակը, կօշիկի ճիտից դուրս քաշեց դանակը, երեսը խաչակնքեց: Տէր Աստուած, դու ողորմես: Խփեց դանակով ձախ ձեռքի արմուկից քիչ բարձր... ցայտեց արիւնը տաք հոսանքով. նա թըլեց թաշկինակը արիւնով, ուղղացրեց, ձիգ տուեց, կապեց փայտին և բար-

ձրացրեց իւր կարմիր դրօշակը . . . :

Կանգնած շարժում է դրօշակը, իսկ գնացքը արդէն երևում է. չէ տեսնում նրան մեքենավարը, շատ կը մօտենայ, իսկ լետոյ 100 սաժենի վրայ չի կարող կանգնեցնել ծանր գնացքը:

Իսկ արիւնը շարունակ հոսում է. Սիմէօնը սեղմում է ձեռքը կրծքին, ուզում է կանգնեցնել արիւնը, բայց չէ յաջողում. երևում է, շատ խոր վէրք է բաց արել: Գլուխը պտոյտ եկաւ, աչքերին սև ամպեր երևացին, իսկ լետոյ բոլորովին խաւարեցին. ականջներին զանգակներ էին հնչում. այլ ևս չէ տեսնում գնացքը, չէ լսում ոչ մի աղմուկ, միայն մի միտք ունի, վալ թէ չը դիմանամ, ցած ընկնեմ, վայր ձգեմ դրօշակը, գնացքը անցնի վրայովս . . . Տէր Աստուած, ողորմիր, մի օգնական հասցուր . . . Աչքերը բոլորովին խաւարեցին, դատարկութիւն տիրեց հոգու մէջ և նա վայր ձգեց դրօշակը, բայց գետին չընկաւ արիւնոտ դրօշակը. մի ինչ որ ձեռք բռնեց և վեր բարձրացրեց մօտեցող գնացքի դիմաց: Մեքենավարը նկատեց նրան, ծածկեց ըեզուլետաօրը, փոխեց շոգու ընթացքը, գնացքը կանգ առաւ:

Մարդիկ դուրս եկան շոգեկառքից, խոնուեցին: Տեսնում են, որ մի մարդ ընկած է՝ ամբողջովին արեան մէջ, ուշաթափ եղած, մի ուրիշը կանգնած է նրա մօտ արիւնոտ լաթի կտորը փայտի ծայրին կապած:

Նայեց շուրջը Վասիլին, կախ ձգեց գլուխը.
— Կապեցեք ինձ — ասում է, — ես եմ ընկածը տեղահան արել:




« Ազգային գրադարան

NL0318597

9360

10.342

5-00



Պահիր. Книжная торговля Т.
Буніятянца, Баку.

891.71
9-36